ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Հրազդան **«13» մայիսի 2024թ.**

«Առաջատար Տեխնոլոգիաների Զեռնարկությունների Միություն» հասարակական կազմակերպությունը, այսուհետ՝ «ԱՏԶՄ» ՀԿ, ի դեմս գործադիր տնօրեն՝ Սարգիս Կարապետյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Նվիրառու») մի կողմից և Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Սևակ Միքայելյանի, (այսուհետ՝ «Նվիրաբերող») մյուս կողմից, (այսուհետ՝ միասին «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Նվիրաբերողը «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագրի և Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 08-ի № 68 որոշման շրջանակներում Նվիրառուին է նվիրաբերում 1 000 000 /մեկ միլիոն/ դրամ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քաղսիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում «Արմաթ» ինժեներական լաբորատորիա ստեղծելու նպատակով:

1.2. Սույն Պայմանագրի 1.1. կետում նշված գումարը Նվիրաբերողը Նվիրառուին է տրամադրում մինչև 2024 թվականի մայիսի 20-ը:

1.3. Կողմերը սույն Պայմանագրով պայմանավորվում են, որ Նվիրառուն պարտավորվում է սույն Պայմանագրի 1.1. կետում նշված «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցը ներդնել, աշխատանոցի ներդրման համար անհրաժեշտ ամբողջ գումարի՝ 6 000 000 (վեց միլիոն) դրամը հավաքագրվելուց հետո երկամսյա ժամկետում:

2. Նվիրաբերության գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Նվիրաբերողը՝ սույն Պայմանագրի 1.1 կետով սահմանված նպատակների իրագործման համար տրամադրում է անկանխիկ եղանակով, դրամական միջոցները Նվիրառուի՝ սույն պայմանագրում նշած հաշվին փոխանցելու միջոցով:

2.2. Պայմանագրով տրամադրված միջոցները պետք է օգտագործվեն բացառապես պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներով:

2.3. Այն դեպքում, երբ սույն Պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում Նվիրառուն չի ներդնի «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, ապա Նվիրառուն պարտավորվում է վերադարձնել սույն Պայմանագրի շրջանակներում Նվիրաբերողից ստացված ողջ գումարը:

2.4. Նվիրառուն Նվիրաբերողի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Նվիրաբերողին է տրամադրում սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ վճարման բոլոր հիմքերով:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված ֆինանսական միջոցների օգտագործումը Նվիրաբերողի սահմանած նպատակին համապատասխան դառնում է անհնար, ապա այն կարող է օգտագործվել այլ նպատակով՝ միայն Նվիրաբերողի համաձայնությամբ:

3.2. Եթե Նվիրառուն նվիրաբերած ֆինանսական միջոցներն օգտագործել է Նվիրաբերողի սահմանած նշանակությանն անհամապատասխան, կամ այդ նշանակությունը փոփոխվել է սույն պայմանագրի 3.1. ենթակետով նախատեսված կանոնների խախտմամբ, ապա Նվիրաբերողը կամ նրա իրավահաջորդն իրավունք ունեն պահանջել Նվիրառուից հետ վերադարձնելու նվիրաբերված գումարը:

4. Պայմանագրի փոփոխման և լուծման կարգը

4.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

4.2. Նվիրառուն իրավունք ունի նախքան նվիրաբերվող ֆինանսական միջոցներն իրեն փոխանցելը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել սույն Պայմանագրով նախատեսված Նվիրաբերությունից: Այդ դեպքում՝ պայմանագիրը համարվում է լուծված:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

5.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. Այլ պայմաններ

6.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

6.2. Սույն Պայմանագիրը հանդիսանում է ինքնուրույն Պայմանագիր և մաս չի կազմում Կողմերի միջև կնքված որևէ այլ Պայմանագրի կամ համաձայնագրի:

6.3. Սույն Պայմանագրին, Պայմանագրի պայմաններին, Պայմանագրից բխող գործողություններին կամ Պայմանագրի բանակցություններին առնչվող՝ Կողմերի միջև փոխանակված ողջ տեղեկատվությունը, բացառությամբ պետական մարմինների և զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին կա), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կամ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.2. Սույն Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմի համար մեկ օրինակ:

7.3. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

7.4. Այն, ինչ չի կարգավորվում սույն Պայմանագրով, կարգավորվում է կողմերի համաձայնությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Կողմերի հասցեները, ստորագրությունները և վավերապայմանները

Նվիրառու	Նվիրաբերող
«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ոսկերիչների 1 ՀՎՀՀ՝ 01226155 Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2052222084281001 Գործադիր տնօրեն՝ Սարգիս Կարապետյան ..... Կ.Տ	**Հրազդանի համայնքապետարան** Հասցեն՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ 1 ՀՎՀՀ՝ 03027114 Համայնքի ղեկավար՝ Սևակ Միքայելյան ..... Կ.Տ.